ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՇՏԱՐԱԿԻ ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆՈՒՆԵ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՎԱՀԱՆՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ 2022

Բովանակություն

Ներածություն----------3
Համագործակցային ուսուցում—----------6
Համագործակցային ուսուցման կազմակերպումը----------10
Դասի պլան—----------14
Եզրակացություն ----------15
Օգտագործված գրականության ցանկ ----------17

Ներածություն

Նորագույն կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը արդիականացվում է: Ոչ միայն դասավանդողներն են զինվում նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով ,այլև գնալով փոխվում է սովորողների դերակատարումը:

Կարող ենք փաստել ,որ կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցոսը դառնա ոչ թե հարկադրանք, այլ սեփական հետաքրքրությունները ,ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ:

Կրթության կազմակերպման խնդիրներից են կրթական միջավայրի ստեղծումը, սոցիալապես ակտիվ, ինքնակազմակերպվող խմբի ձևավորումը: Այդ խնդիրների լուծման լավագույն ճանապարհը խմբային աշխատանքն է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելու:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է:

Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Դասավանդողը պիտի դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը: Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված համագործակցային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Համագործակցային աշխատանքը խթանում է սովորողների՝

- համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց,
- կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար,

- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը,
- միմյանց նկատմամբ հարգանքը,
- խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի համար պատասխանատվությունը:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Մենք՝ ուսուցիչներս, դասավանդման ընթացքում կիրառում ենք խմբային աշխատանք, սակայն ոչ բոլոր դեպքերում է խմբային աշխատանքը դառնում համագործակցային: Ուսուցումը համագործակցային է այն դեպքում, երբ աշակերտները զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի թեմայի շուրջ, մի նոր խնդիր լուծելու կամ մի նոր բան ստեղծելու համար:

Թեմայի արդիականությունը

Տվյալ հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը և հիմնավորվածությունը կայանում է նրանում, որ ներկայումս համագործակցային ուսուցման կարևորությունը դասապրոցեսում կարևորվում է՝ կախված այդպիսի աշխատանքի ցուցաբերած արդյունավետության հետ: Սակայն կարևոր է, որպեսզի այդպիսի աշխատանքը լինի ճիշտ կազմակերպված, համապատասխանի աշակերտների կարողություններին և գիտելիքներին, ուղղված լինի թույլ կամ միջին առաջադիմությամբ աշակերտների ներգրավվածության ապահովմանը, այլ ոչ թե նրանց «ճնշմանը» առավել ակտիվ և բարձր առաջադիմությամբ աշակերտների կողմից: Ինչպես նաև համագործակցային ուսուցման ուսումնասիրությունը մեզ թույլ կտա հասկանալ, թե ինչպես է այն ազդում աշակերտների սոցիալական ներգրավվածության և ակտիվության զարգացման վրա, ինչը հանդիսանում է կրթական ամբողջ գործընթացի կարևոր խնդիրներից մեկը:

Հետազոտության նպատակը

Տվյալ հետազոտական աշխատանքի հիմնական նպատակը կայանում է նրանում, որ ուսումնասիրվի համագործակցային մեթոդի էությունը, դրա առանձնահատկությունները, առավելությունները և սահմանափակումները: Ինչպես նաև առանցքային նպատակ է ուսումնասիրել համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությունը դասապրոցեսում, դրա

ազդեցությունը աշակերտների՝ խմբով աշխատելու և միմյանց հետ համագործակցելու հմտությունների ձևավորման վրա:

Հետազոտության խնդիրները

Այս հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

1. Ուսումնասիրել համագործակցության էությունը և դրա առանձնահատկությունները դասապրոցեսում:
2. Առանձնացնել համագործակցային աշխատանքների կազմակերպման փուլերը դասապրոցեսում:
3. Բացահայտել և ցույց տալ համագործակցային ուսուցման արդյունավետությունը աշակերտների ակտիվության և սոցիալական ներգրավվածության, ինչպես նաև լեզվամտածողության զարգացման վրա:
4. Բարձրացնել աշակերտների ակտիվությունը և ներգրավվածությունը դասապրոցեսում:

Համագործակցայի ուսուցում

Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած է թիմային աշխատանքը, երբ աշակերտները ռեսուրս են հանդիսանում մեկը մյուսի համար: Ուսուցման այս ձևը ապահովում է համագործակցություն, ինքնուրույնություն և խմբային գործունեություն: Ոսուցիչը կարող է զարգացնել սովորողների միջև համագործակցություն `ստեղծելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ բոլոր աշակերտները կընդունեն խմբի ընդհանուր նպատակը և կգիտակցեն, որ խմբի յուրաքանչյուր անդամի հաջողությունն իրենց առավելությունն է:

Բոլորը պետք է ստանան առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պետք է ունենան իրենց դերը, որն էլ իր հերթին կնպաստի աշխատանքի բաժանմանը. օրինակ՝ աշակերտներից մեկը կարող է խմբի առաջնորդ լինել, մյուսը կարող է գրանցել մտքերը, իսկ երրորդն էլ կարող է հանդես գալ որպես խմբի խոսնակ: Խմբային աշխատանքների ժամանակ երեխաները կարող են միասին գրել, իրար փոխանցել գրավոր աշխատանքները, փոխանակել կարծիքներ:

Համագործակցային սկզբունքներով կազմակերպված աշխատանքները շատ արդյունավետ են ցածր դասարաններում: Համագործակցային ուսուցումը լավագույն միջոցներից է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Նման հնարավորությունը շատ կարևոր է այս երեխաների համար, քանզի նպատակ ունենալով սովորեցնելու նախօրոք պլանավորած ուսումնական նյութը՝ համագործակցային աշխատանքն օգնում է ձեռք բերելու դրական փորձ՝ համադասարանցիների հետ շփվելու և մյուսներին օգնելու համար:

Երեխաներին խմբավորելիս շատ կարևոր է հստակ բացատրել, թե ինչ է իրենցից պահանջվում, և որոնք են աշխատանքի հիմնական պահանջները: Ուսուցիչը ևս կարող է մասնակցել այս աշխատանքներին և ուղղորդել, որ խմբի

անդամներն օգնեն մեկը մյուսին, սա առանցքային միջամտություն է, քանի որ երբ աշակերտները սովորում են աշխատել խմբով, նրանք կարող են թիմային առաջընթաց ցուցաբերել՝ նույնիսկ առանց ուսուցչի օգնության:

«Ուսուցում ընկերոջ հետ» տեխնիկան կիրառվում է, երբ աշակերտներից մեկը, ով արդեն սովորել է և տիրապետում է ուսումնական նյութին, սովորեցնում է մեկ այլ աշակերտի: Ուսուցման այս ձևն ուղեկցվում է ուսուցչի վերահսկմամբ, ով նախօրոք պլանավորում է առաջադրանքը և ներկայացնում զույգին: Սովորեցնողի դերում հանդես եկող աշակերտն օգնում է ընկերոջը , ամրապնդում իր սովորածը և ապահովում հետադարձ կապ:

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար» [Խաչատրյան Ս.Գ. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն հիմնականում հինգն են.

- դրական փոխկապակցվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթացի մշակում [Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, էջ 45-47]:



Համագործակցային աշխատանքի արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ» [Խաչատրյան Ս.Գ. Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 17-24]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին» [Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 145]:

Համագործակցային աշխատանքի ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում աշակերտները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ բավականին մեծ և նշանակալի է: «Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում» [Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, էջ 48]:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար և ճիշտ ուղղություն տա խմբի անդամներին: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակային մասը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Տվեք երեխային հետաքրքրասիրություն,գիտելիքը կգտնի ինքը
Անատոլի Գին

Դպրոցում ուսուցման ընթացքում համագործակցային աշխատանքների կազմակերպումը և իրականացումը ներկայումս զբաղեցնում է իր առանցքային դիրքը դասապրոցեսի կազմակերպման ողջ համակարգում: Այդպիսի աշխատանքներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է աշակերտների միջոցով:Համագործակցային իրավիճակում անհատները միտված են նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ:

Բացի այդ՝ համագործակցային ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Համագործակցային աշխատանքի խոցելի կողմերից մեկն էլ այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկենք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

Շատ զգույշ պետք է վարվել համագործակցային աշխատանքներ կազմակերպելիս:

Շատ տարածված իրողություն է,

- որ խմբում մեկն իր վրա է վերցնում ողջ աշխատանքը՝ կարդում է նյութը, պարտադրում է իր կարծիքը, գրում է, նկարում է, և մյուսները մնում են ստվերում,
- աշխատանքը ժամանակի առումով չի վերահսկվում և կարող է ժամանակին չավարտվել,
- խմբի ներսում հստակ չեն բաժանվում պարտականությունները,
- սենյակում լսվող ոչ գրադարանային ձայնը խանգարում է աշխատել:

Շատ հաճախ տարբեր տարիքային խմբերի երեխաների մոտ, կարող են նկատվել որոշակի դժվարություններ՝ կախված սոցիալական նորմերի իրացման և յուրացման հետ, շփման և հաղորդակցման խնդիրների, որոնց շարքում կարող են լինել ագրեսիան, հիպերակտիվությունը, ամոթխածությունը և այլն: Դասապրոցեսում իրականացված դիտարկումների ընթացքում նկատելի է դառնում, որ այս երեխաները դասամիջոցներին գրեթե միշտ մենակ են լինում, նրանք դժվարությամբ են շփվում դասընկերների հետ, երբեմն, չիմանալով ինչպես դիմել կամ մտնել ընդհանուր խաղի մեջ, նրանց պահվածքը կարող է ագրեսիվ բնույթ կրել: Այսպիսի երեխաները դասերի ժամանակ ևս աչքի չեն ընկնում իրենց ակտիվությամբ :

Զարմանալի չէ, որ այսպիսի հատկանիշներով օժտված երեխաները հիմնականում ունենում են ցածր ինքնագնահատական, նրանք զգում են, որ ի տարբերություն այլ երեխաների, իրենք չեն կարողանում գրանցել այն առաջընթացը, ինչ իրենց հասակակիցները:

Այստեղ շատ կարևոր է, որ ուսուցիչները բացահայտեն երեխայի ուժեղ կողմերը և հնարավորություն ստեղծեն դրսևորելու դրանք. սա միջոց է՝ փոխելու թե՛ երեխայի, թե՛ դասընկերների պատկերացումը աշակերտի կարողությունների վերաբերյալ:

Համագործակցային աշխատանքի ընթացքում այդպիսի աշակերտները ներգրավվում են խմբի աշխատանքներում և հասնում նկատելի արդյունքի: Երբ դասարանում սովորում են երեխաներ, ովքեր ունեն ագրեսիվ վարք, կամ կարողություններով տարբերվում են համադասարանցիներից,մեծ խնդիրներ են ունենում դասընկերների հետ, և շատ կարևոր է համապատասխան աշխատանք կազմակերպել նրանց հետ: ՈՒսուցիչը պետք է նախօրոք զրուցի աշակերտների հետ, տեղեկացնի երեխայի առանձնահատկությունների մասին և

հնարավորության սահմաններում հուշի երեխաներին, թե ինչպես կարելի է շփվել և մտերմություն հաստատել նրանց հետ:

Երեխաների համար դպրոցի հիմնական գործառույթը սոցիալականացումն է, երբեմն հնարավոր է, որ դպրոցում երեխան ակադեմիական մեծ առաջընթաց այդպես էլ չգրանցի: Կարևոր է, որ ուսուցիչը կարողանա երեխային սովորեցնի սոցիալական հմտություններ և դրանք համապատասխան իրավիճակում կիրառել. այն է՝ դիմել մյուս երեխաներին, օգնություն խնդրել, հարցեր տալ կամ պատասխանել հարցերին, միանալ խմբային խաղերին, զգալ իր կարևորությունը:

Աշխատանքային գործունեության ընթացքում իրականացրած համագործակցային աշխատանքի ձևերից մեկն էլ խաղերի կազմակերպումն ու իրականացումն է: Համագործակցային ուսումնառության ընթացքում կազմակերպվող խաղերը հստակ կանոններ ունեն, որոնք զարգացնում են խաղացողների թիմային մտածողությունը: Խաղացողները ոչ միայն սովորում են ենթարկվել բոլորի համար ընդհանուր կանոններին, այլև պատասխանատվություն են զգում խաղընկերների նկատմամբ: Նման խաղերի ժամանակ դրսևորվում են նաև խաղացողի առաջնորդական հատկանիշները, կազմակերպչական կարողությունները, պատասխանատվութուն ստանձնելու խիզախությունը:

Որպես համագործակցային խաղային աշխատանքի օրինակ դիտարկենք համագործակցության բազմաթիվ հնարներից մեկը, որը լայն կիրառում ունի ժամանակակից դպրոցներում և նպաստում է ոչ միայն աշակերտների լեզվական և մտածողության ընդունակությունների, այլև սոցիալական ակտիվության և ներգրավվածության զարգացմանը:

Խառը պատմություն:

Նպատակը: Հնարավորություն տալ աշակերտներին՝ շարունակելու նախադասությունները:

Դասարանը: Միջին դասարաններ:

Անհրաժեշտ նյութեր: Փոքրիկ պատմություն՝ բաժանված մասերի և գրված առանձին քարտերի վրա:

Ընթացքը: Քարտերը բաժանել խմբերին, հանձնարարել աշակերտներին ուշադիր կարդալ և այնպես դասավորել, որ պատմության իմաստը վերականգնվի: [Հոգեբանական խաղեր և վարժություններ: Ձեռնարկ դաստիարակների, մանկավարժների և հոգեբանների համար/ Կազմ.՝ Թ.

Հարությունյան, Հ. Կարապետյան, Ա. Ենգիբարյան, Մասնագիտական խմբագիր՝ Ռ. Ստեփանյան.-Եր.: Ասողիկ, 2014, էջ 63-69]

Այսպիսի համագործակցային աշխատանքի ժամանակ զարգանում են սովորողների խոսքը, մտածողությունը, սոցիալական հաղորդակցական հմտությունները: Խմբերի միջև առաջանում է առողջ մրցակցություն. յուրաքանչյուր խումբ փորձում է ամեն ինչ անել, որ իր աշխատանքն ավելի լավը լինի: Այս պարագայում աշխատանքները շատ հետաքրքիր ու բովանդակալից են դառնում: Այդպիսի խմբերում սովորողներն առավել մեծ ակտիվություն են դրսևորում

Այսպիսի աշխատանքը սովորողին տալիս է մտածելու, հետազոտելու, սովորելու, աշխատելու հնարավորություն: Այս աշխատանքի առավելություններն են.

- նպաստում է թիմային աշխատանքին՝ մարդուն դարձնելով հանդուրժող, ուրիշի կարծիքը հարգող, համբերատար,ձևավորվում է լսելու կարողություն:
- զարգանում է սովորողների պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու համար:
- սովորողը գիտի, որ իր կատարած աշխատանքի համար միայն ինքը չի պատասխանատու և իր արած սխալը կամ բացթողումը կարող է խմբի աշխատանքի ձախողման պատճառ դառնալ, ուստի ավելի պատասխանատու է գործին մոտենում:

Ինչպես ցանկացած բնագավառում, այնպես էլ համագործակցային խմբային աշխատանքներում շատ կարևոր դեր ունի դասավանդողը, ով իր օրինակով ոգևորում է սովորողներին, սովորեցնում աշխատանքային գործիքներից ճիշտ օգտվել, դրան զուգահեռ հետևում է, որ խմբի բոլոր մասնակիցները ներգրավված լինեն աշխատանքում: Աշխատանքի այս տեսակը սովորողների մոտ զարգացնում է խմբով աշխատելու կարողություն:

Յուրաքանչյուր դասարան խմբով աշխատելու պահանջ ունի: Ինչպես արդեն գիտենք, դասվանդվող թեմայի շրջանակներում աշակերտները բաժանվում են խմբերի: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Ներկայացնենք այդ աշխատանքներից մեկ օրինակ:

Դասի պլան

Դասարան-5-րդ

Առարկա՝ մայրենի– 5-րդ դասարան

Դասի թեմա – Հովհ. Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթը:

Ձևավորվող կարողունակություններ – լեզվական գրագիտություն, սովորել սովորելու, ինքնաճանաչողական կարողունակություններ:

Հիմնական հասկացություն – հաղորդակցում:

Ենթահասկացություն – բանավոր, գրավոր հաղորդակցում:

Խաչվող հասկացություն – պատճառ և հետևանք:

Միջառարկայական կապ – կենդանաբանություն, արվեստ:

Ներառարկայական կապ – Ս. Կապուտիկյան «Լավություն արա» բան.:

Նպատակներ.

- ✔ Առարկայական.

1. Սովորել առոգանությամբ ընթերցել,
2. Ճիշտ և անսխալ գրել,
3. Ներկայացնել հեքիաթի հիմնական ասելիքը,
4. Հեքիաթը պատմել որպես ականատես, պատմել ձկնորսի, շալակտարի անունից;
5. Հեքիաթը ներկայացնել դերախաղով:

- ✔ Սոցիալական.

1. Զարգացնել համագործակցային հմտություններ:

Վերջնարդյունքներ.

1. Աշակերտները կիներկայացնեն հեքիաթի հիմնական ասելիքը,
2. Առոգանությամբ կկարդան երկխոսությունները,
3. Հեքիաթը կներկայացնեն դերախաղով,
4. Կապրումակցեն հերոսներին,
5. Կարծիք կհայտնեն և կհիմնավորեն սեփական տեսակետը,
6. Կզարգանա աշակերտների ստեղծագործական ունակությունը,
7. Կարժևորեն մարդկային լավագույն հատկանիշները,
8. Կզարգանան համագործակցային հմտություններ:

Անհրաժեշտ նյութեր – դասագիրք, թղթեր, գրիչներ:

Կիրառվող մեթոդներ - «Պրիզմա», «Մանրապատում», «Մտագրոհ», «Քառաբաժան», », «Խմբային հետազոտություն»:

Դասի տևողությունը – 2 դասաժամ՝ 90 րոպե:

Դասի ընթացքը.

Խթանում.

1. Կառուցել «Պրիզմա» «լավություն» մեկնաբառով:Պրիզմայի բովանդակությունը պայմանավորված է նրանով , թե ինչ բառեր, մտքեր կհայտնեն աշակերտները:Նրանք ուսուցչի հրահանգով սկսում են թվարկել այն բառերը և արտահայտությունները,որոնք առաջինն են գալիս իրենց մտքին:Երբ ավարտում են պրիզմայի կառուցումը, ուսուցիչը աշակերտներին տալիս է ժամանակ,որպեսզի նրանք կազմեն մեկ նախադասություն՝ իրար կապելով մեկնաբառը և վերջնաբառը:
2. «Մանրապատում» - Աշակերտները իրենց կյանքից հիշում են դեպքեր, պատմում և գալիս ընդհանուր եզրահանգման:
3. «Մտագրոհ» - ի՞նչ գիտեք ձկների մասին: Ասում են, որ ձկները չեն խոսում, համամի՞տ եք:

Իմաստի ընկալում. «Խմբային հետազոտություն»: Դասարանը բաժանել երեք խմբի, յուրաքանչյուր խմբի հանձնարարել մի հատված և առաջադրանքներ.

- ✔ Ընթերցել հատվածը;
- ✔ Դուրս գրել անծանոթ բառերը և փորձել ինքնուրույն բացատրել;
- ✔ Հատվածից դուրս գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը;
- ✔ Հատվածի բովանդակությունն արտահայտել մեկ նախադասությամբ;
- ✔ Հեքիաթը պատմել – 1 խումբը պատմում է որպես ականատես, 2 խումբը՝ շալակտարի անունից, 3 խումբը՝ ձկնորսի անունից:
- ✔ Հեքիաթի հատվածը վերածել դերախաղի:

Կշռադատում – Ուսուցիչը արտասանում է Ս. Կապուտիկյանի «Լավություն արա» բանաստեղծությունը: Ծավալվում է քննարկում: Ուսուցիչը կարճ զրույցի միջոցով ամբողջացնում է աշակերտների արտահայտած մտքերը, կարծիքները: Աշակերտները լրացնում են «Քառաբաժան» աղյուսակը:

Ի՞նչ էի լսում	Ի՞նչ էի զգում
Ի՞նչ էի տեսնում	Ի՞նչ մտքեր էին ծնվում

Անդրադարձ – Այս փուլում ուսուցիչը հնարավորություն է ունենում պարզելու՝ ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի ձեռքբերումները և բացթողումները,դժվարություններն ու խոչընդոտները՝ շտկումներ կատարելու նպատակով:

Անդրադառնալ այս հարցերին.

- ✔ Ի՞նչ սովորեցիք,
- ✔ Ի՞նչը զարմացրեց,
- ✔ Ի՞նչը հիացրեց,
- ✔ Ի՞նչը վախեցրեց:

Գնահատում – փոխադարձ, ձևավորող, ինքնագնահատում:

Տնային հանձնարարություն -Շարադրանք՝ « Եթե ես լիներ ձկնորսի փոխարեն.. »

Եզրակացություն

Ուսուցման ժամանակ առավել հաճախ կիրառվող հնարքներից է համագործակցային մեթոդով կազմակերպված ուսուցումը: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ դասարանում ստեղծվում են փոքր խմբեր, որոնց ներսում պարտադիր կանոն է համագործակցությունը, համատեղ քննարկումը և միասնական աշխատանքը: Խմբերում գլուխ գլխի տված աշխատելիս սովորողներն ի վիճակի են լինում մտքեր փոխանակել և հիմնվել իրենց՝ ընդհանուր, հավաքական փորձի վրա: Այս մեթոդը նրանց հնարավորություն է ընձեռում արդյունքում ավելի լավ յուրացնել մատուցված նյութը: Խմբային աշխատանքի ընթացքում ծնվում են բազմաթիվ գաղափարներ, դիտարկումներ և կարծիքներ, որոնցից կարևորագույններն ամփոփ ներկայացվում են դասարանին: Խմբային աշխատանքի ընթացքում դասավանդողը պետք է հետևի ժամանակին և ապահովի, որպեսզի բոլոր խմբերը հասցնեն ներկայացնել իրենց աշխատանքը:

Համագործակցային աշխատանքն ունի մի շարք առավելություններ՝

- Մասնակիցները կարող են սեփական փորձը ներկայացնել և օգտվել ուրիշների փորձառությունից, միևնույն ժամանակ աջակցություն ստանալ խմբի մյուս մասնակիցներից;
- Խմբի մասնակիցները հնարավորություն են ստանում ճանաչել իրենց, սեփական ռեսուրսները, հնարավորությունները, վարքագծի առանձնահատկությունները և այլն:
- Խմբի մասնակիցները կարող են սովորել նոր հմտություններ, փորձարկել դրանք ապահով միջավայրում, ձևավորել վարքի նոր ձևեր:

Խմբային աշխատանքներ իրականացնելիս պետք է՝

- ընտրել խմբային աշխատանքի իրականացման համար հարմարավետ սենյակ:
- մինչև հանդիպումը պատրաստել բոլոր անհրաժեշտ նյութերը;
- խրախուսել երեխաներին՝ խոսել իրենց զգացմունքների մասին և ներկայացնել սեփական փորձառությունը:
- օգնել երեխաներին՝ պատասխանատվություն ստանձնել իրենց վարքի համար.

Յուրաքանչյուր փոքրիկ հաջողություն կարող է մեծ նշանակություն ունենալ երեխայի կյանքում: Ուստի, մենք՝ մանկավարժներս, պիտի

կարողանանք յուրաքանչյուր երեխայի մեջ տեսնել այն լուսավոր և ուժեղ կողմերը, որի միջոցով նա հնարավորություն կունենա դրսևորել իրեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս.Գ. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006
2. Խաչատրյան Ս.Գ. Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, Երևան, «Տիգրան Մեծ», 2003
3. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004
4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006
5. Հոգեբանական խաղեր և վարժություններ: Ձեռնարկ դաստիարակների, մանկավարժների և հոգեբանների համար/ Կազմ.՝ Թ. Հարությունյան, Հ. Կարապետյան, Ա. Ենգիբարյան, Մասնագիտական խմբագիր՝ Ռ. Ստեփանյան.- Եր.: Ասողիկ, 2014
6. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005